13.07.2015թ.

# ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ (Արմ.) համայնքի ղեկավարի 2015 թվականի առաջին կիսամյակի հաշվետվության

## Արձանագրություն

17.07.2015 թվականին կայացավ Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի ղեկավարի 2015 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունը:

Հաշվետվությանը ներկա էին ՀՀ Արմավիրի փոխմարզպետ Դավիթ Սամսոնյանը , Այգեշատ համայնքի ավագանու անդամներ՝ Հայկ Համբարձումյանը, Զորիկ Ոսկանյանը, Գևորգ Ղազարյանը, Վաչագան Հունանյանը, Ռուստամ Հասոյանը և Այգեշատ համայնքի թվով 82 բնակիչներ: Այգեշատ համայնքի ղեկավար Արամայիս Մխիթարյանը հանգամանալից ներկայացրեց 2015 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունը: Այգեշատ համայնքի ավագանու անդամները իրենց շնորհակալությունը հայտնեցին Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանին և համայնքի ղեկավար Արամայիս Մխիթարյանին համայնքում կատարված աշխատանքների համար:

Համայնքի բնակիչ Սպարտակ Հովհաննիսյանը հարց բարձրացրեց 2015 թվականին գյուղատնտեսական մթերքների մթերման վերաբերյալ: Համայնքի ղեկավար Արամայիս Մխիթարյանը պատասխանելով բնակչի հարցին՝ ասաց, որ այս տարի անսահմանափակ քանակությամբ կմթերվեն բանջարեղեն և խաղող: Համայնքի բնակիչ Ռազմիկ Մխիթարյանը հարց բարձրացրեց 2015 թվականին ցորենի մթերման գնի վերաբերյալ: Համայնքի ղեկավար Արամայիս Մխիթարյանը պատասխանելով բնակչի հարցին՝ ասաց, որ այս տարի Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը պայմանավորվել է Սամվել Ալեքսանյանի հետ, որ Դալարիկի ալրաղաց կոմբինատում ցորենը կմթերվի 1 կիլոգրամը 120 դրամով:

Արձանագրությունը կազմեց Այգեշատ համայնքի
ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ Ս. Ղազարյան

Այգեշատ համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան

ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ (Արմ.) համայնքի 2015թ – ի համայնքի ղեկավարի առաջին կիսամյակի հաշվետվություն

1. **Գործավարություն.**

2015թ – ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 22 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 268 հատ տեղեկանքներ, 25 բնութագրեր: Հղվել են 35 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավար-ներին: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 12 որոշում: Արձակվել է 2 կարգադրություն:

2. **Ավագանու գործունեություն.**

2015թ – ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 3 հերթական նիստ: Ավագանու քննարկմանն են ներկայացվել 4 դիմումներ և ստացել իրենց համապա-տասխան լուծումները:

3. **Գյուղատնտեսության ոլորտ.**

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են.

բնակավայրային նշանակության հողեր – 140 հա

գյուղ. նշանակության հողատարածք – 329.5 հա, որից

խաղողի այգի – 56.7 հա

պտղատու այգի – 82 հա

2015թ – ի կատարվել է 81.5 հա. հացահատիկի, լոբու, 20 հա., կարտոֆիլի 10 հա., բոստանային կուլտուրաների 41 հա., վարունգի 14 հա., լոլիկի 25 հա., սեխանի ճակնդեղ 2 հա., սոխի 39 հա., և այլ բանջարեղենի 22 հա., եգիպտացորենի 30 հա., առվույտի 34 հա., կաղամբ 2 հա.ցանքեր:

**Անասնագլխաքանակ.**

խոշոր եղջերավոր անասուններ – 596 գլուխ, որից կովեր՝ 185 գլուխ

մանր եղջերավոր անասուններ – 2582 գլուխ ոչխար, որից մայրեր՝ 2337

399 խոզեր, որից մայրեր՝ 63

մեղվաբուծանիք – 624

թռչուններ – 5273

## 4. Հողի հարկ և գույքահարկ.

2015թ – ին համայնքային բյուջեով նախատեսվել է 8502.3 հազար դրամ հողի հարկ: 01.07.2015թ. դրությամբ համայնքի հողօգտագործողներից գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 105.0 հազար դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 1.2 % - ը:

Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 4635.0 հազար դրամ:

01.07.2015թ – ի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 1426.9 հազար դրամ, որը կազմում է տարեկան գույքահարկի 30.7% - ը: 2015 թ- ի բյուջեով նախատեսվել է 3.130. 0 հազար դրամ տեղական տուրքեր և վճարներ, 01.07.2015թ – ի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 163.5 հազար դրամ: 2015 թվականին բյուջեով նախատեսվել է 121.0 հազար դրամ վարձավճար:

2015 թ – ի բյուջեով պետության կողմից տարվա ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կազմել է 30.023.9 հազար դրամ, որը ֆինանսավորվել է 50% - ով: 2015թ – ի բյուջեում սեփական եկամուտները նախատեսվել է 16.438.3 հազար դրամ 01.07.2015թ. դրությամբ սեփական եկամուտների փաստացի մուտքերը կազմել են 1695.4 հազար դրամ: Սեփական եկամուտները կատարվել են 10.3 % - ով:

## Ծախսեր.

Այգեձորի գյուղապետարանը 09.01.2015թ – ից մինչև 01.07.2015 թվականը կատարել է հետևյալ ծախսերը:

1. վճարվել է ընթացիկ աշխատավարձ – 10.871.3 հազար դրամ
2. համակարգչային ծառայության համար փոխանցվել է – 35. 0 հազար դրամ
3. փոխանցվել է էլեկտրոէներգիայի գումար – 2581.6 հազար դրամ
4. միջոցառումների համար՝ մայիսի 9, մայիսի 28 և վերջին զանգ, կատարվել է ծախս – 370.0 հազար դրամ
5. մանկապարտեզին փոխանցվել է սուբսիդիա - 2082.0 հազար դրամ
6. խորքային պոմպի վերանորոգման համար փոխանցվել է _ 480.0 հազար դրամ
7. ձեռք է բերվել համակարգիչ _ 180.0 հազար դրամ
8. կապի ծառայության համար – 30.0 հազար դրամ
9. գրենական պիտույքների համար – 470.6

Ազգաբնակչություն.

ա) Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 2126 մարդ:

2015թ – ի առաջին կիսամյակի ընթացքում Այգեշատ համայնքում ծնվել է 4 երեխա,

գրանցվել է 10 մահ:

Ընտանեկան նպաստ ստացողներ 19 ընտանիք:

Համայնքում թոշակառուները 233 մարդ է:

10.

Կրթություն և գիտություն.

Համայնքում գործում է մեկ դպրոց 198 աշակերտով: Մեկ մանկապարտեզ՝ հաճախող 52

երեխայով և 8 աշխատողով:

11.

Մշակույթ.

Համայնքը ունի մեկ մշակույթի տուն 4 աշխատողով, գործող գրադարան 1 աշխատողով:

Մշակույթի տանը գործում է ազգագրական պարերի խումբ՝ 60 երեխաներով:

12.

Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա 6 աշխատողով:

14.

Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն աջակցությամբ պատշաճ կերպով

կազմակերպվել է 2015թ-ի գարնանային զինակոչը և կատարվել է պլան առաջադրանքը:

9 . Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են ՀՀ պետական տոները և հիշատակի օրերը: Պատշաճ կերպով նշվել է

ապրիլի 24-ը՝ Մեծ Եղեռնի 100 - ամյակի կապակցությամբ, ըստ հարկի նշվում և Հայրենական Մեծ Պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման օրը՝ մայիսի 9-ը: Նշվում է

նաև մայիսի 28-ի Հայաստանի 1-ին Հանրապետության օրը: Սահմանադրության օրվա

կապակցությամբ համայնքի մշակույթի տանը ելույթով հանդես եկան «Սասուն» ազգագրական երգի-

պարի խումբը և համայնքի ազգագրական պարի խումբը: Պարբերաբար իրականացվում է գյուղի

փողոցների աղբահանությունը: Անխափան իրականացվում է խմելու ջրի մատակարարումը:

## 10. Համայնքի հիմնախնդիրներ.

ա) Համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների նորոգումը (հարթեցում, ավազապատում).

բ) Վերանորոգման կարիք ունի նաև գյուղապետարանի շենքը.

գ) համայնքի հիմնախնդիրներից է նաև փողոցների լուսավորության հարցը.

դ) համայնքի հիմնախնդիրներից է նաև համայնքի նոր թաղամասերի գազաֆիկացման և էլեկտրոֆիկացման հարցը.

Այգեշատի գյուղապետ՝ Ա. Մխիթարյան